



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 12/2

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2018 թվականի դեկտեմբերի 17-ից

ԳՅՈՒՏԵՐ.....	4, 46
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....</i>	<i>6, 48</i>
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ.....	10, 52
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....</i>	<i>12, 54</i>
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	14, 56
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին.....</i>	<i>16, 58</i>
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ.....	17
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին.....</i>	<i>19</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին.....</i>	<i>39</i>
ՑՈՒՑԻՉՆԵՐ.....	40
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	42
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ.....	59

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 3
Հեռ. (011) 597-534 հայտերի ընդունման բաժին
Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

Ереван, 0010, Площадь Республики, Правительственный дом, 3
Тел. (374 11) 597-534 отдел приема заявок
Тел. (374 11) 597-535 отдел информационно-технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 46
Сведения о выданных патентах.....	6, 48
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	10, 52
Сведения о выданных патентах.....	12, 54
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	14, 56
Сведения о зарегистрированных промышленных образцах.....	16, 58
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	17
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания.....	19
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	39
УКАЗАТЕЛИ.....	40
СООБЩЕНИЯ.....	42
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	59

CONTENTS

INVENTIONS.....	4, 46
Information on granted patents.....	6, 48
UTILITY MODELS.....	10, 52
Information on granted patents.....	12, 54
INDUSTRIAL DESIGNS.....	14, 56
Information on registered industrial designs.....	16, 58
TRADE MARKS.....	17
Information on registered trade marks and service marks.....	19
Information on renewal of effect of trademark registration.....	39
INDEXES.....	40
REPORTS.....	42
TWO-LETTER CODES.....	59

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

- 11** *արտոնագրի համարը*
- 13** *փաստաթղթի տեսակի կոդը*
A գյուտի արտոնագիր
B արտոնագրառունակության մասին եզրակացություն
- 21** *հայտի համարը*
- 22** *հայտի ներկայացման թվականը*
- 23** *ցուցահանդեսային առաջնության թվականը*
- 31** *առաջին հայտի համարը*
- 32** *առաջին հայտի ներկայացման թվականը*
- 33** *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
- 45** *գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51** *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54** *գյուտի անվանումը*
- 56** *տեղեկատվության աղբյուրներ*
- 57** *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62** *ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 72** *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73** *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74** *արտոնագրային հավատարմատար*
- 85** *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86** *միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
- 87** *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 2018.01 (11) 3237 (13) A
A01B9/00
A01B33/00

(21) AM20170088 (22) 16.06.2017

(72) Արշալույս Պողոսի Թարվերդյան (AM), Դանիել Պետրոսի Պետրոսյան (AM), Սամվել Վարդանի Հովհաննիսյան (AM)

(73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) Սկավառակային հողափխրիչ

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես, հողի մշակման պտտվող փխրիչներին:

Սկավառակային հողափխրիչն ունի սկավառակներ և դրանցից յուրաքանչյուրին միակցված զսպանակված դանակներ: Յուրաքանչյուր դանակը սկավառակին միակցված է համապատասխան կանգնակի միջոցով: Յուրաքանչյուր կանգնակը սկավառակին միակցված է մեկ ծայրամասով՝ հողակապորեն, իսկ միջնամասում կարգավորվող կոշտությամբ նույնանման զսպանակների միջոցով միակցված է սկավառակի վրա անշարժ տեղակայված երկու հենակներին:

Բարձրացվում է սարքի հուսալիությունն ու երկարակեցությունը, 2 նկ.:

նյութերի, շինանյութերի, ներկերի, ադսորբենտների, թղթի և այլ սիլիկատային նյութերի ստացման համար, ինչպես նաև որպես կապակցանյութ և սոսինձ:

Դիատոմիտը ջերմամշակում են 600°C ջերմաստիճանում, ապա խառնում ալկալիական մետաղի հիմքի լուծույթի հետ: Խառնուրդն ակտիվացնում են՝ անցկացնելով 4-6 մ/վ արագությամբ 1000-1200 կԱ/մ լարման էլեկտրամագնիսական դաշտի միջով, որից հետո փոխազդում են տաքացման պայմաններում միկրոալիքային ճառագայթների ազդեցության տակ, ընդ որում դիատոմիտի և ալկալիական մետաղի հիմքի լուծույթի հարաբերակցությունը 1:(4-6) է: Ստացված խառնուրդից հեռացնում են հեղուկ ֆազը, նստվածքը լվանում են:

Բարձրացվում է SiO₂ -ի կորզման աստիճանը և եղանակի արտադրողականությունը, կրճատվում է գործընթացի տևողությունը:

(51) 2018.01 (11) 3239 (13) A
C01B 33/00

(21) AM20170082 (22) 05.06.2017

(72) Վոլոդյա Վազգենի Բաղդամյան (AM), Անահիտ Ալեքսանի Սարգսյան (AM)

(73) Վոլոդյա Վազգենի Բաղդամյան, 0060, Երևան, Ավան, Իսահակյան թաղ., 5, բն. 28 (AM), Անահիտ Ալեքսանի Սարգսյան, 0082, Երևան, Կիլիկիա թաղ., Սիսվանի 34 (AM)

(54) Հեղուկ ապակու ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիային, մասնավորապես՝ հեղուկ ապակու ստացման եղանակներին և կարող է օգտագործվել ապակու, կերամիկական նյութերի, շինանյութերի, ներկերի, ադսորբենտների, թղթի և այլ սիլիկատային նյութերի ստացման համար, ինչպես նաև որպես կապակցանյութ և սոսինձ:

Մանրացված քվարցը խառնում են ալկալիական մետաղի հիմքի լուծույթի հետ: Խառնուրդն ակտիվացնում են՝ անցկացնելով 4-6 մ/վ արագությամբ 1000-1200 կԱ/մ լարման

(51) 2018.01 (11) 3238 (13) A
C01B 33/00

(21) AM20170081 (22) 05.06.2017

(72) Վոլոդյա Վազգենի Բաղդամյան (AM), Անահիտ Ալեքսանի Սարգսյան (AM)

(73) Վոլոդյա Վազգենի Բաղդամյան, 0060, Երևան, Ավան, Իսահակյան թաղ. 5, բն. 28 (AM), Անահիտ Ալեքսանի Սարգսյան, 0082, Երևան, Կիլիկիա թաղ., Սիսվանի 34 (AM)

(54) Հեղուկ ապակու ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիային, մասնավորապես՝ հեղուկ ապակու ստացման եղանակներին և կարող է օգտագործվել ապակու, կերամիկական

էլեկտրամագնիսական դաշտի միջով, որից հետո փոխազդում են տաքացման պայմաններում միկրոալիքային ճառագայթների ազդեցության տակ, ընդ որում, քվարցի և ալկալիական մետաղի հիմքի լուծույթի հարաբերակցությունը 1:(2-4) է: Ստացված խառնուրդից հեռացնում են հեղուկ ֆազը, նստվածքը լվանում են:

Բարձրացվում է SiO₂ -ի կորզման աստիճանը և եղանակի արտադրողականությունը, կրճատվում է գործընթացի տևողությունը:

**(51) 2018.01 (11) 3240 (13) A
C01B 33/00**

(21) AM20170083 (22) 05.06.2017
(72) Վոլոդյա Վազգենի Բաղդամյան (AM), Անահիտ Ալեքսանի Սարգսյան (AM)
(73) Վոլոդյա Վազգենի Բաղդամյան, 0060, Երևան, Ավան, Իսահակյան թաղ. 5, բն. 28 (AM), Անահիտ Ալեքսանի Սարգսյան, 0082, Երևան, Կիլիկիա թաղ., Սիսվանի 34 (AM)

(54) Հեղուկ ապակու ստացման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիային, մասնավորապես՝ հեղուկ ապակու ստացման եղանակներին և կարող է օգտագործվել ապակու, կերամիկական նյութերի, շինանյութերի, ներկերի, ադսորբենտների, թղթի և այլ սիլիկատային նյութերի ստացման համար, ինչպես նաև որպես կապակցանյութ և սոսինձ:

Մանրացված պեռլիտը խառնում են ալկալիական մետաղի հիմքի լուծույթի հետ: Խառնուրդն ակտիվացնում են՝ անցկացնելով 4-6 մ/վ արագությամբ 1000-1200 կԱ/մ լարման էլեկտրամագնիսական դաշտի միջով, որից հետո փոխազդում են տաքացման պայմաններում միկրոալիքային ճառագայթների ազդեցության տակ, ընդ որում, պեռլիտի և ալկալիական մետաղի հիմքի լուծույթի հարաբերակցությունը 1:(1-2) է: Ստացված խառնուրդից հեռացնում են հեղուկ ֆազը, նստվածքը լվանում են:

Բարձրացվում է SiO₂ -ի կորզման աստիճանը և եղանակի արտադրողականությունը, կրճատվում է գործընթացի տևողությունը:

**(51) 2018.01 (11) 3241 (13) A
C04B 2/00**

(21) AM20180097 (22) 11.09.2018
(72) Հովհաննես Հովհաննեսյան (AM), Տիգրան Աղաջանյան (AM)
(73) Հովհաննես Հովհաննեսյան (AM)

(54) Մանրադիսպերս չհանգած կրի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է շինարարական նյութերի արտադրությանը, մասնավորապես՝ դիսպերսային կրաքարերի թրծման եղանակներին և կարող է օգտագործվել հանգած կրի արտադրության, մետաղագործության և քիմիական արդյունաբերության մեջ:

Մանրադիսպերս չհանգած կրի ստացման եղանակի համաձայն հումքը նախօրոք մանրացնում են մինչև 50մկմ-ից պակաս չափը, իսկ թրծումը կատարում են օդային հոսքում 5վրկ-ից մինչև մեկ րոպեի ընթացքում, 850-950°C ջերմաստիճանում, ընդ որում, որպես հումք օգտագործում են մարմարի և(կամ) տրավերտինի կարբոնատային ապարների կտրման, հղկման և ողորկման արդյունքում առաջացած թափոնները:

Ապահովվում է մանրադիսպերս չհանգած կրի ստացման եղանակի պարզեցումն ու ինքարժեքի նվազեցումը:

(74) Արեգ Պետրոսյան

**(51) 2018.01 (11) 3242 (13) A
F02M 21/00**

(21) AM20170080 (22) 02.06.2017
(72) Արման Ռոբերտի Սիմոնյան (AM), Ռազմիկ Մակարի Բալայան (AM), Մարինե Վաչիկի Մխիթարյան (AM)
(73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) Ներքին այրման շարժիչի համակցված սնման համակարգ

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ ներքին այրման շարժիչի համակցված սնման համակարգերին:

Ներքին այրման շարժիչի համակցված սնման համակարգն ունի միմյանց հաջորդաբար միակցված բարձր ճնշման գազի

բալոն, մեխանիկական փական, գազատար խողովակ, գազի ռեդուկտոր և խառնիչ, միմյանց հաջորդաբար միակցված բենզաբաք, բենզատար խողովակ, վառելիքային գոլիչ, էլեկտրոնային բենզապոմպ և դրոսելային խողովակաոստ, ինչպես նաև կառավարման էլեկտրոնային բլոկ: Համակարգը լրացուցիչ ունի գազի բալոնի մեխանիկական փականի ու գազատար խողովակի միջև տեղակայված պայթյունապաշտպանված էլեկտրամագնիսական փական և շարժիչի ծածկոցի տակ տեղակայված հարվածի տվիչ: Պայթյունապաշտպանված էլեկտրամագնիսական փականն ու հարվածի տվիչը զուգահեռ միացված են կառավարման էլեկտրոնային բլոկին:

Ապահովվում է համակցված սնման համակարգով աշխատող ավտոմոբիլի վթարի ժամանակ բարձր ճնշման գազի բալոնից ներքին այրման շարժիչ գազի հոսքի դադարեցումը, բարձրացվում է հետվթարային անվտանգությունը, 1 նկ.:

(51) 2018.01 (11) 3243 (13) A
F02M 21/00

(21) AM20170089 (22) 16.06.2017

(72) Արման Ռոբերտի Սիմոնյան (AM), Ռազմիկ Մակարի Բալայան (AM)

(73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) Գազի ներարկմամբ ներքին այրման շարժիչի համակցված սնման համակարգ

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ գազի ներարկմամբ ներքին այրման շարժիչի համակցված սնման համակարգերին:

Համակարգն ունի բարձր ճնշման խողովակների միջոցով միմյանց հաջորդաբար միակցված գազի բալոն, գազային ռեդուկտոր, էլեկտրամագնիսական փական ու էլեկտրամագնիսական բոցամուղ, բենզատար խողովակ, դրան միակցված բենզինային փական, խողովակաոստ ունեցող օդազոտիչով օդառիչ, խողովակաոստում տեղակայված օդի ծախսի տվիչ, դրան միացված գործառական

կերպափոխիչ և միկրոպրոցեսորային բլոկ: Էլեկտրամագնիսական փականը, բոցամուղը, բենզինային փականը և գործառական կերպափոխիչը միացված են միկրոպրոցեսորային բլոկին: Համակարգը լրացուցիչ ունի բարձրաչափ, էլեկտրական շարժիչ և օդի լրացուցիչ չափաբաժին ապահովող կցախողովակ: Օդազոտիչով օդառիչը լրացուցիչ ունի խողովակաոստ: Էլեկտրական շարժիչը, կցախողովակն ու լրացուցիչ խողովակաոստը հաջորդաբար միակցված են միմյանց: Էլեկտրական շարժիչն ու բարձրաչափը միացված են միկրոպրոցեսորային բլոկին:

Անկախ ծովի մակերևույթից ունեցած տեղանքի բարձրությունից, շարժիչի աշխատանքի տվյալ ռեժիմի համար վառելիքային խառնուրդի անհրաժեշտ կազմի ապահովումով բարելավվում են ավտոմոբիլի քարշաարագային հատկանիշները, բարձրացվում է վառելիքային շահավետությունը, 1 նկ.:

(51) 2018.01 (11) 3244 (13) A
G01R 27/00

(21) AM20180094 (22) 10.09.2018

(72) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամիկոնյան (AM)

(73) Բորիս Մամիկոնյան, 3103, Գյումրի, Մ. Մկրտչյան 2 (AM), Խորեն Մամիկոնյան, 3103, Գյումրի, Մ. Մկրտչյան 2 (AM)

(54) Ինդուկտիվության կոճի պարամետրերի որոշման եղանակ

(57) Ըստ ինդուկտիվության կոճի պարամետրերի որոշման եղանակի կոճին հաջորդաբար միացնում են հիմնական ռեզիստոր և լրացուցիչ ռեզիստոր: Լրացուցիչ ռեզիստորը միացնում են կոճի և փոփոխական հոսանքի աղբյուրի միջև: Լրացուցիչ ռեզիստորի արտանցիչներին միացնում են փոխանջատիչի անշարժ հպակները, իսկ հիմնական ռեզիստորը միացնում են փոփոխական հոսանքի աղբյուրի ազատ սեղմակի և ընդհանուր հաղորդալարի միջև: Այդ միացումներով կազմված չափողական շղթան սնում են փոփոխական հոսանքով: Չափում են ընդհանուր հաղորդալարի նկատմամբ հիմնական ռեզիստորի և փոխանջատիչի

շարժական հպակի լարումների միջև փուլային շեղման անկյունը փոխանջատիչի երկու դիրքերում: Այդ անկյան արժեքներով որոշում են հետազոտվող կոճի պարամետրերը:

Ընդլայնվում է ինդուկտիվության կոճի պարամետրերի որոշման եղանակի կիրառության ոլորտը, բարձրացվում է պարամետրերի որոշման ճշգրտությունը, 2 նկ.:

**(51) 2018.01 (11) 3245 (13) A
G01R 27/00**

(21) AM20180096 (22) 10.09.2018

(72) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամիկոնյան (AM)

(73) Բորիս Մամիկոնյան, 3103, Գյումրի, Մ. Մկրտչյան 2 (AM), Խորեն Մամիկոնյան, 3103, Գյումրի, Մ. Մկրտչյան 2 (AM)

(54) Դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսի որոշման սարք

(57) Սարքը կարող է օգտագործվել դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսը բարձրավիճակում չափելու և որոշելու համար:

Սարքն ունի բարձրավիճակում տրանսֆորմատոր, որի ցածր լարման փաթույթը միացված է սինուսոիդային փոփոխական հոսանքի սնուցման աղբյուրին, փուլաչափիչ, դրա ելքին միացված հաշվիչ հարմարանք, հաջորդական միացումով ռեզոնանսային կոնտուր: Տրանսֆորմատորի բարձր լարման փաթույթի շղթայում միացված են հաջորդաբար փորձարկվող օբյեկտը և ռեզոնանսային կոնտուրը: Փուլաչափիչի առաջին մուտքին տրվում է տրանսֆորմատորի բարձրավիճակում փաթույթի լրացուցիչ արտանցիչի ցածրավիճակում լարումը, իսկ երկրորդ մուտքին՝ ռեզոնանսային կոնտուրի ունակային տարրի սեղմակների լարումը: Փուլաչափիչը չափում է այդ լարումների միջև փուլային շեղման անկյունը, իսկ հաշվիչ հարմարանքը չափված անկյան արժեքով որոշում է փորձարկվող օբյեկտի դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսը:

Բարձրացվում է դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսի չափման և որոշման ճշգրտությունը, 2 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը U օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 2018.01 (11) 538 (13) Ս
A61C 5/00
A61C 3/00

(21) AM20180098U (22) 13.09.2018

(72) Սեմյոն Սամարյան (AM)

(73) Սեմյոն Սամարյան (AM)

(54) Վիրաբուժական սևեռակ և սևեռակակալ

(57) Օգտակար մոդելը վերաբերում է վիրաբուժական ատամնաբուժությանը և կարող է օգտագործվել ոսկրային վերականգնման դեպքերում փափուկ թաղանթների սևեռման համար:

Սևեռակն իրականացված է շրջանաձև գլխարկով սրածայր մեխիկի տեսքով: Շրջանաձև գլխարկն իրականացված է համառանցք համադրված երկու տափօղակի տեսքով, որոնցից վերևինն ունի ավելի փոքր տրամագիծ: Մեխիկի ծայրն իրականացված է կանոնավոր բուրգի տեսքով, մասնավորապես՝ եռանկյուն կամ քառանկյուն բուրգի, որոնց հիմքի կողմերը կամ կողմնային նիստերը գոգավոր են: Սևեռակակալն ունի բռնալծակ և սևեռակը բռնող ծայրապանակ: Ծայրապանակն իրականացված է առանձնացվող, բռնալծակի հետ միացման հնարավորությամբ: Բռնալծակը տատանակ (օսցիլատոր) է, որը պտտական-տատանողական շարժում է հաղորդում ծայրապանակին:

Նվազեցվում է սևեռակի մտցնելով պայմանավորված տհաճ զգացումների առաջացումը հիվանդի մոտ, ապահովվում է սևեռակը մտցնելուց հետո սևեռակակալի հեշտությամբ հեռացումը, 3 նկ.:

(74) Անդրանիկ Խաչիկյան

(51) 2018.01 (11) 539 (13) Ս
A61H 33/00
B60P 3/00
B60P 3/00

(21) AM20180066U (22) 31.05.2018

(72) Ավետիս Ահարոնյան (AM)

(73) «Սլաք» ՓԲԸ (AM)

(54) Շարժական դաշտային բաղնիք

(57) Օգտակար մոդելը վերաբերում է հիգիենայի պահպանման սարքավորումներին, մասնավորապես՝ շարժական դաշտային բաղնիքներին:

Շարժական դաշտային բաղնիքն ունի թափք, վառարան՝ իր ծխատար խողովակով, ցնցուղային սարքեր, օդամբար, էլեկտրական տաքացուցիչով տաք ջրի բաք: Բաքը մի կողմից միացված է վառարանի ելքին, մյուս կողմից՝ ցնցուղային սարքերին: Սարքը ունի նաև օդամբարին միացված սառը ջրի բաք, խողովակաշար և թափքի վրա տեղակայված ջրառքի հարմարանք: Սարքի տաք ջրի բաքի ներսում տեղակայված է գալարախողովակ, որը խողովակի և դրա վրա տեղակայված փականների միջոցով միացված է մեքենայի շարժիչի հովացման համակարգին:

Բարձրացվում է սարքի աշխատանքի արդյունավետությունը և շարժիչի երկարակեցությունը, 3 նկ.:

(74) Ռուբեն Մանասերյան

(51) 2018.01 (11) 540 (13) Ս
B60T 17/00
G01L 5/00

(21) AM20180064U (22) 30.05.2018

(31) 2017119422/11, (32) 02.06.2017, (33) RU

(72) Վյաչեսլավ Նիկոլայի Բոչկարն (RU), Պավել Նիկոլայի Բոչկարն (RU), Կոնստանտին Յուրիի Դյոմին (RU), Ալեքսեյ Ալեքսեյի Պոպկով (RU)

(73) Վյաչեսլավ Նիկոլայի Բոչկարն (RU), Պավել Նիկոլայի Բոչկարն (RU), Կոնստանտին Յուրիի Դյոմին (RU), Ալեքսեյ Ալեքսեյի Պոպկով (RU)

(54) Արգելակային գլանում ճնշման վերահսկման սարք

(57) Օգտակար մոդելը վերաբերում է երկաթուղային տրանսպորտի համակարգերում կիրառվող չափման սարքերին, հատկապես՝ արգելակային գլանում ճնշման վերահսկման սարքերին, և կարող է օգտագործվել երկաթուղային շարժակազմի, մասնավորապես՝

բեռնափոխադրող վագոնների արգելակային համակարգերը հետազոտելիս:

Արգելակային գլանում ճնշման վերահսկման սարքն ունի մուտքի խողովակաուստով իրան և դրա մեջ տեղակայված, զսպանակած մխոց ունեցող խուց: Սարքն ունի նաև երկաթուղային շարժակազմի վագոնների դատարկ և բեռնված ռեժիմների ցուցչային զսպանակած մեկական մխոց: Մխոցներից յուրաքանչյուրը տեղադրված է իրանի համապատասխան խցում, իսկ յուրաքանչյուր ցուցչային մխոցի խուցն անցուղիով միակցված է մխոցի խցի հետ: Անցուղիները մխոցի խցին կապված են տարբեր մակարդակներում:

Ապահովվում է վագոնի արգելակման սարքավորման աշխատունակության տեսողական գնահատման հնարավորությունը դրա արգելակման արդյունավետության ապահովման մասով, բարձրացվում են վագոնի արգելակման սարքավորման աշխատունակության գնահատման հուսալիությունն ու հավաստիությունը, 1 նկ.:

(74) Վահագն Պետրոսյան

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ**

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

- 11** վկայագրի համարը
- 13** փաստաթղթի տեսակի կոդը
S արդյունաբերական նմուշի վկայագիր
- 21** հայտի համարը
- 22** հայտի ստացման թվականը
- 23** ցուցահանդեսային առաջնության թվականը
- 24** գրանցման թվականը
- 31** առաջնային հայտի համարը
- 32** առաջնային հայտի ներկայացման թվականը
- 33** երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
- 51** արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման
(ԱՆՄԴ) ցուցիչը (ները)
- 54** արդյունաբերական նմուշի անվանումը
- 55** արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)
- 72** հեղինակը(ները), երկրի կոդը
- 73** իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը
- 74** արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

(51) 09-01 (11) 481 (13) S
09-03
(21) 20180032 (22) 16.07.2018
(72) Վաչե Վաղարշակյան (AM)
(73) «Վալկո» ՍՊԸ, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արագած 1-ին փ., տուն 92 (AM)
(54) Հուշանվերային հավաքածու կաշվե պիտակով և փայտե փաթեթավորմամբ, շի ներսում փայտից մանրակերտ
(55)



1.1



2.1



3.1



4.1



5.1



6.1

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20170948
(220) 26.06.2017

(111) 28246
(151) 13.12.2018
(181) 26.06.2027

(730) «Դեկորա-գրուպ» ՍՊԸ, Երևան, Արա-
րատյան 90/9Ա, AM

(442) 02.10.2017
(540)



(511)

դաս 2. ներկեր, արծնուկներ, լաքեր. մետաղը ժանգոտումից և փայտանյութը քայքայումից պաշտպանող նյութեր. ներկանյութեր. խաճատող, սևեռակայող նյութեր, չմշակված բնական խեժեր. թերթավոր և փոշենման մետաղներ գեղանկարչության, գեղազարդման նպատակների և գեղարվեստական տպագրության համար.

դաս 6. հանքանյութեր.

դաս 19. ասֆալտ, խեժեր և բիտում. ոչ մետաղական հուշարձաններ.

դաս 20. կահույք, հայելիներ, նկարների շրջանակներ. ոչ մետաղական բեռնարկղեր պահպանման և փոխադրման համար. չմշակված կամ մասնակի մշակված եղջյուր, ոսկոր, փղոսկր կամ սադափ. խեցի. ծովի փրփուր. սաթ.

դաս 21. տնային կամ խոհանոցային կահկարասի և սպասք. սանրեր և սպունգներ. խոզանակներ, բացառությամբ վրձինների. խոզանակների պատրաստման նյութեր. իրեր մաքրման նպատակների համար. չմշակված կամ մասնակի մշակված ապակի, բացառությամբ շինարարական ապակու. ապակյա, հախճապակյա և ճենապակյա իրեր.

դաս 40. նյութերի մշակում:

(210) 20171332
(220) 14.09.2017

(111) 28247
(151) 13.12.2018
(181) 14.09.2027

(730) «Պապյան տորակո» ՍՊԸ, Երևան,
Չարենցի փ., տուն 135/3, AM

(442) 01.11.2017
(540)



(511)

դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ. լուցկի.

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում, մասնավորապես՝ սննդամթերքի պատրաստում, առաքում, մատուցում և սեղանի ձևավորում (քեյթրինգ), սրճարանների ծառայություններ. նախաճաշարանների ծառայություններ. ռեստորանների ծառայություններ. ինքնասպասարկման ռեստորանների ծառայություններ. խորտկարանների ծառայություններ. բարերի ծառայություններ:

(210) 20171742
(220) 11.12.2017

(111) 28248
(151) 13.12.2018
(181) 11.12.2027

(730) Կարեն Հակոբյան, Երևան, Դավթաշեն
1-ին թաղ., շ. 41, բն. 56, AM

(442) 01.02.2018

(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է ինդիգո և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 41. առցանց դասընթացներ:

(210) 20180373

(111) 28249

(220) 13.03.2018

(151) 13.12.2018

(181) 13.03.2028

(730) «Անիթեքս» ՍՊԸ, ք. Արտաշատ, Գործարանային 1, AM

(442) 03.04.2018

(540)



(511)

դաս 24. բարձր ջերմաստիճանում կաշող կաշուն գործվածքներ, անգազանցիկ գործվածքներ օդապարիկների համար, կենդանիների կաշին նմանակող գործվածքներ, պաստառապատման գործվածքներ կահույքի համար, լողանալու սպիտակեղեն (բացառությամբ հագուստի), բաններներ մանածագործվածքից կամ պլաստմասսայից, բիլյարդի մահուղ, գործ-

վածքներ, մարմաշ (գործվածք), մոմլաթ, դիպակ, մանածագործական նյութեր, կտավ, հենք (կանվա) ասեղնագործության կամ ջուլիակագործության համար, քաթան (կտոր), գործվածքներ կանեփաթելից, կտավ (քաթան) կանեփաթելից, աստառներ բոլորագլխարկների համար, գործվածքներ կոշիկների տակդիրների համար, գործվածքներ կոշիկների համար, սեղանի ոչ թղթե նեղ սփռոցիկներ, շկոտ (կտոր), մոմլաթե սփռոցներ, թավիշ, թաղիք, բամբակե գործվածքներ, անկողնու ծածկոցներ, ներքնակերեսներ, խտակտավ (վուշե գործվածք), անկողնու թղթե ծածկոցներ, սփռոցներ, բացառությամբ թղթից պատրաստվածների, ճամփորդական ծածկոցաշալեր, կրեպ (նոսր գործվածք), կրեպոն, կամկայե (նախշավոր) գործվածքներ, սպիտակեղենի գործվածքներ, գործվածքներ աստառի համար, սավաններ, պատանքներ, մանածագործվածքից կամ պլաստմասսայից դրոշներ, մանածագործվածքից կամ պլաստմասսայից գունազարդ դրոշակներ, նախշավոր կտոր ուղեգորգերի (ուղեխաթերի) համար, աղվափետուրից վերմակներ, ծածկոցներ, ձգուն (էլաստիկ) գործվածքներ, վարագույրների կապեր մանածագործվածքից, ապակե սպասքը սրբելու անձեռոցիկներ (սրբիչներ), նախշավոր գործվածքներ ասեղնագործության համար, ֆլանել, բայկա (խավոտ գործվածք), բամբակե գործվածքներ պանրի փաթաթվածքի համար, բումազե, մարմին լվանալու թաթմաններ, գազե գործվածքներ (շղարշ), ռետինապատված կտավ (բացառությամբ գրասենյակային նպատակների համար օգտագործվողների), մազե գործվածք (պարկագործվածք), պատյաններ կահույքի համար, մետաքսե գործվածքներ տպագրական շաբլոնների (ձևանմուշների) համար, դաջովի չթե գործվածքներ, ջերսի (գործվածք), ջութե գործվածքներ, բրդե գործվածքներ, վուշե գործվածքներ, անկողնու սպիտակեղեն, սպիտակեղեն նախշավոր կտավից, սեղանի սպիտակեղեն, բացառությամբ թղթից պատրաստվածի, սպիտակեղեն տնային տնտեսության համար, սրբիչներ մանածագործվածքից, մետաքսե գործվածք «մարաբու», խտակտավ ներքնակների համար, պլաստմասսայե ծածկոցներ կահույքի համար, սեղանի անձեռոցիկներ մանածագործված-

քից, մոլեսկին (գործվածք), թաշկինակներ մանածագործվածքից, հակամոծակային ցանցեր, բարձերեսներ, պլաստմասսայե նյութեր (գործվածքների փոխարինիչներ), ծանր վարագույրներ, գործվածքներ ոսամիի (ճենականեփի) թելքից, գործվածքներ արհեստական մետաքսից, վարագույրներ մանածագործվածքից կամ պլաստմասսայից, կոսմետիկական անձեռոցիկներ մանածագործվածքից, մետաքսե գործվածքներ, շղարշ, գործվածքներ սպանեախոտից, տաֆտա (նրբադիպակ) (գործվածք), տրիկոտաժի գործվածքներ, շղարշե վարագույրներ, զեֆիր (գործվածք), չիթ, մանածագործվածքից ամանատակեր, սեղանի մանածագործվածքից տակդիրներ, մանածագործական ոչ գործվածքային նյութեր, ներդրակներ քնապարկերի համար, մանածագործվածքից անձեռոցիկներ գրիմը մաքրելու համար, պիտակներ մանածագործական նյութերից, մանածագործական երեսպատման նյութեր պատերի համար, մանածագործական գործվածքներ ապակեթելքից, մանածագործական նյութեր զտելու համար, գրամեքենաների ծածկոցներ մանածագործվածքից, գործվածքներ թավաթելից, պատյաններ բարձերի համար, սպասքի տակ դրվող մանածագործվածքից դրոցներ, վերմակներ, ծածկոցներ, բազմոցի բարձերի ծածկոցներ, նյութեր մանածագործվածքի համար, մանածագործական նյութեր կահույք պաստառապատելու համար, գործվածքից պատյաններ զուգարանակոնքերի կափարիչների համար, ցնցուղարանի վարագույրներ մանածագործվածքից կամ պլաստմասսայից, գործվածքից տակաշորեր մանկիկների համար, գործվածքից խանձարուրներ մանկիկների համար, վերմակներ տնային կենդանիների համար, քնապարկեր նորածինների համար, ծրարներ նորածինների համար, քնապարկեր, մահճակալի ժանյակերիզներ, մանկական մահճակալների բամպերներ (անկողնային սիպտակեղեն), մուսլինի գործվածք.

դաս 25. կոշիկի սահելը խոչընդոտող հարմարանքներ, հագուստ ավտոմոբիլիստների համար, կոշիկ, բաղնիքի սանդալներ,

բաղնիքի հողաթափներ, գուլպաներ (երկար), քրտինք կլանող երկար գուլպաներ, գուլպաների կրկնակրունկներ, բերետներ, բլուզներ, բուսներ (մորթե վզապատներ՝ գործետներ), գլխարկներ, գդակներ, տրիկոտաժեղեն, երկարաճիտ կոշիկներ, կիսակոշիկներ, կոշկաքթեր (կոշիկների մասեր), քրտնակալներ, տաբատակալներ, քուղերով կիսակոշիկներ, հագուստի օձիքներ, կաշնեններ, լիֆեր, բռնցքամարտիկների վարտիքներ, թասակներ (գլխարկ), իրանակալներ (կանացի ներքնազգեստ), ներքնազգեստ, գլխանոցներ (հագուստ), բոլորագլխարկների շրջանակներ (հենք), հովարներ գլխարկների համար, գոտիներ (հագուստ), շալեր, խալաթներ, սվիտերներ, պուլովերներ, շուրջառներ (եկեղեցական զգեստ), կարճագուլպաներ, կապեր կարճագուլպաների համար, կախակապեր, կապեր երկար գուլպաների համար, կոշիկների ճտքեր, միջատակեր, շապիկներ (բլուզներ), պլաստրոններ, կրծքակալներ, հագուստ, բոլորագլխարկներ, գլխարկներ, մետաղե եզրակ կոշիկների համար, մորթիներ (հագուստ), հանովի օձիքներ, զուգագուլպաներ, կոմբինեզոններ ջրային դահուկների համար, կոմբինեզոններ (հագուստ), քրտինք ներծծող ներքնազգեստ, առանց քուղերի սեղմիրաններ (գրացիաներ), կոստյումներ, պատրաստի հագուստ, մանկական վարտիքներ (ներքնազգեստ), ականջակալներ (հագուստ), փողկապներ, կոշկերեսներ, զանգապաններ, բրիջիներ, տաբատներ, հագուստ հեծանվորդների համար, վերնազգեստ, ձեռնոցներ (հագուստ), պատրաստի աստառներ (հագուստի տարրեր), վզապատներ, շարֆեր, տրիկոտաժե հագուստ, ներդիրներ շապիկների համար, էսպադրիլներ, մորթե թիկնոցներ, բուսներ (ֆուտբոլային), ցիլինդրներ, գաբարդիներ (հագուստ), սեղմիրաններ (ներքնազգեստ), գոտիներ (ներքնազգեստ), կրկնակոշիկներ, բաճկոնակներ, փողքաժապավեններ, գլխաշոր, որը ծածկում է պարանոցը և ուսերը, մարմնամարզական կոշիկներ, մանտո, անջրանցիկ հագուստ, սոնապաններ (զամաշներ՝ տաք գուլպաներ կոճերից մինչև ծնկները), հագուստ ջերսիից, շրջազգեստներ, նորածնի օժիտ (հագուստ),

շքազգեստներ (սպասավորների), սպորտային տրիկոտաժեղեն, բազկապատներ, գոգնոցներ (հագուստ), մուֆտաներ (հագուստ), օրարի (եկեղեցական հագուստ), թաթմաններ, խույրեր (եկեղեցական գլխարկ), տնային կոշիկներ, կնճուղով վերարկու (թիկնոցներ), մուշտակներ, լողափի զգեստներ, լողափի կոշիկ, գրպաններ հագուստի համար, պիժամաներ, զգեստներ, սաբոներ (կոշիկ), սանդալներ, կիսավարտիքներ, կրծկալներ, վերարկուներ, կոշիկների կրնկատակեր, պատմուճաններ (պարեգոտներ), ռանտեր կոշիկների համար, համազգեստ, բրդյա բաճկոններ (հագուստ), բաճկոններ (հագուստ), թղթե հագուստ, քողեր (հագուստ), լողագլխարկներ, լողավարտիքներ, լողազգեստներ, բաղնիքի խալաթներ, մանկական կրծկալներ, բացառությամբ թղթից պատրաստվածների, ներբաններ, կոշիկներ, կրունկներ, սպորտային կոշիկներ, ոչ էլեկտրական մուֆտաներ ոտքերի համար, սեպեր բուստերի համար, սպորտային կիսակոշիկներ, գլխակապեր (հագուստ), գլխանոցով բաճկոն, տակի շրջազգեստներ, դահուկների կիսակոշիկներ, կանացի ներքնաշապիկներ (կոմբինացիա), բոդի (կանացի ներքնազգեստ), բանդանաներ (պարանոցի թաշկինակներ), հագուստ մարմնամարզիկների համար, հագուստ արհեստական կաշվից, կաշվե հագուստ, թիկնոցներ, դիմակահանդեսի կոստյումներ, սարիներ, կարճաթև (T-աձև) մայկաներ, չալմաներ, ժապավենակապ փողկապներ լայն եզրերով, ջրցողի գլխարկներ, ձկնորսական բաճկոններ, գոտի-քսակներ (հագուստ), կրծքի գրպանի թաշկինակներ, թղթե գդակներ (հագուստ), դիմակներ քնելու համար, կիսատաբատաձև շրջազգեստներ, պոնչոներ, սարոնգներ, դահուկորդների ձեռնոցներ, լեգինսներ (շալվար), սարաֆաններ, հովարով գլխարկներ, կիսատաբատներ (ներքնազգեստ), սպորտային մայկաներ, կաճյակներ (թաղիքե ոտնաման), ժամաշապիկներ, մինչև կոճերը հասնող կոշիկներ, քրտինք ներծող կարճագուլպաներ, վարսավիրական թիկնոց, կարատեի համազգեստ, ձյուդոյի համազգեստ, մարմնամարզական կիպ նստող զգեստ, կիմոնո, թևքերով մանկական կրծկալներ, բացառությամբ թղթից պատրաստվածների:

(210) 20180436 (111) 28250
 (220) 23.03.2018 (151) 13.12.2018
 (181) 23.03.2028

(730) Ռիմցմա Սիզրեթընֆաբրիքըն ԳմբՀ, DE
 (442) 16.05.2018
 (540)

BRILLIANT WHITE

(526) «WHITE» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:
 (511)

դաս 34. մշակված կամ չմշակված ծխախոտ. ծխախոտային արտադրանք. ծխախոտի փոխարինիչներ ոչ բուժական կամ բժշկական նպատակների համար. սիգարետներ, ծխազլանակներ. սիգարիլներ. սիգարներ. սիգարետներ պատրաստելու ձեռքի մեքենաներ. սիգարետների պարկուճներ. ֆիլտրեր սիգարետների համար. սիգարետների պապիրոսաթուղթ. էլեկտրոնային սիգարետներ. հեղուկ լուծույթներ էլեկտրոնային սիգարետների համար. լուցկիներ և ծխելու պիտույքներ:

(740) Արարատ Գալոյան

(210) 20180437 (111) 28251
 (220) 23.03.2018 (151) 13.12.2018
 (181) 23.03.2028

(730) Աբդուլհամիդ Դասթարաս, AE
 (442) 16.04.2018
 (540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև և նարնջագույն գունային համակցությամբ:
 (511)

դաս 25. կոշիկի սահելը խոչընդոտող հարմարանքներ, հագուստ ավտոմոբիլիստների համար, կոշիկ, բաղնիքի սանդալներ, բաղնիքի հողաթափներ, գուլպաներ (երկար), քրտինք կլանող երկար գուլպաներ, գուլպաների կրկնակրունկներ, բերետներ, բլուզներ, բուաներ (մորթե վզպատներ՝ գործետներ), գլխարկներ, գդակներ, տրիկոտաժեղեն,

երկարաճիտ կոշիկներ, կիսակոշիկներ, կոշկաթթեր (կոշիկների մասեր), քրտնակալներ, տաբատակալներ, քուղերով կիսակոշիկներ, հագուստի օձիքներ, կաշնեներ, լիֆեր, բոնցքամարտիկների վարտիքներ, թասակներ (գլխարկ), իրանակալներ (կանացի ներքնազգեստ), ներքնազգեստ, գլխանոցներ (հագուստ), բոլորագլխարկների շրջանակներ (հենք), հովարներ գլխարկների համար, գոտիներ (հագուստ), շալեր, խալաթներ, սվիտերներ պուլվերներ, շուրջառներ (եկեղեցական զգեստ), կարճագուլպաներ, կապեր կարճագուլպաների համար, կախակապեր, կապեր երկար գուլպաների համար, կոշիկների ճտքեր, միջատակեր, շապիկներ (բլուզներ), պլաստրոններ, կրծքակալներ, հագուստ, բոլորագլխարկներ, գլխարկներ, մետաղե եզրակ կոշիկների համար, մորթիներ (հագուստ), հանովի օձիքներ, զուգագուլպաներ, կոմբինեզոններ ջրային դահուկների համար, կոմբինեզոններ (հագուստ), քրտինք ներծծող ներքնազգեստ, առանց քուղերի սեղմիրաններ (գրացիաներ), կոստյումներ, պատրաստի հագուստ, մանկական վարտիքներ (ներքնազգեստ), ականջակալներ (հագուստ), փողկապներ, կոշկերեսներ, զանգապաններ, բրիջիներ, տաբատներ, հագուստ հեծանվորդների համար, վերնազգեստ, ձեռնոցներ (հագուստ), պատրաստի աստառներ (հագուստի տարրեր), վզպատներ, շարֆեր, տրիկոտաժե հագուստ, ներդիրներ շապիկների համար, մորթե թիկնոցներ, բուստեր (ֆուտբոլային), ցիլինդրներ, գաբարդիներ (հագուստ), սեղմիրաններ (ներքնազգեստ), գոտիներ (ներքնազգեստ), կրկնակոշիկներ, բաճկոնակներ, փողքաժապավեններ, գլխաշոր, որը ծածկում է պարանոցը և ուսերը, մարմնամարզական կոշիկներ, մանտո, անջրանցիկ հագուստ, սոնապաններ (գամաշներ՝ տաք գուլպաներ կոճերից մինչև ծնկները), հագուստ ջերսիից, շրջազգեստներ, նորածնի օժիտ (հագուստ), շքազգեստներ, սպորտային տրիկոտաժեղեն, բազկապատներ, գոզնոցներ (հագուստ), մուֆտաներ (հագուստ), օրարի (եկեղեցական հագուստ), թաթմաններ, խոյրեր (եկեղեցականգլխարկ), տնային կոշիկներ, կնգուղով վերարկու (թիկնոցներ), մուշտակներ, լողափի զգեստներ, լողափի կոշիկ,

գրպաններ հագուստի համար, պիժամաներ, զգեստներ, սաբոներ (կոշիկ), սանդալներ, կիսավարտիքներ, կրծկալներ, վերարկուներ, կոշիկների կրնկատակեր, պատմունաններ (պարեգոտներ), ռանտեր կոշիկների համար, համազգեստ, բրոյա բաճկոններ (հագուստ), բաճկոններ (հագուստ), թղթեհագուստ, քողեր (հագուստ), լողագլխարկներ, լողավարտիքներ, լողազգեստներ, բաղնիքի խալաթներ, մանկական կրծկալներ, բացառությամբ թղթից պատրաստվածների, ներբաններ, կոշիկներ, կրունկներ, սպորտային կոշիկներ, ոչ էլեկտրական մուֆտաներ ոտքերի համար, սեպեր բուստերի համար, սպորտային կիսակոշիկներ, գլխակապեր (հագուստ), գլխանոցով բաճկոն, տակի շրջազգեստներ, դահուկների կիսակոշիկներ, կանացի ներքնաշապիկներ (կոմբինացիա), բողի (կանացի ներքնազգեստ), բանդանաներ (պարանոցի թաշկինակներ), հագուստ մարմնամարզիկների համար, հագուստ արհեստական կաշվից, կաշվե հագուստ, թիկնոցներ, դիմակահանդեսի կոստյումներ, սարիներ, կարճաթև (t-աձև) մայկաներ, չալմաներ, ժապավենակապ փողկապներ լայն եզրերով, ջրցողի գլխարկներ, ձկնորսական բաճկոններ, գոտի-քսակներ (հագուստ), կրծքի գրպանի թաշկինակներ, թղթե գոլակներ (հագուստ), դիմակներ քնելու համար, կիսատաբատաձև և շրջազգեստներ, պոնչոներ, սարոնգներ, դահուկորդների ձեռնոցներ, լեգինսներ (շալվար), սարաֆաններ, հովարով գլխարկներ, կիսատաբատներ (ներքնազգեստ), սպորտային մայկաներ, կաճյակներ (թաղիքե ոտնաման), ժամաշապիկներ, մինչև կոճերը հասնող կոշիկներ, քրտինք ներծծող կարճագուլպաներ, վարսավիրական թիկնոց, կարատեի համազգեստ, ձյուդոյի համազգեստ, մարմնամարզական կիպ նստող զգեստ, կիմոնո, թևքերով մանկական կրծկալներ, բացառությամբ թղթից պատրաստվածների:

(210) 20180474

(220) 29.03.2018

(111) 28252

(151) 13.12.2018

(181) 29.03.2028

(730) «Զոլոտոե պոլե» ՍՊԸ հայաստանյան մասնաճյուղ, ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Է. Պետրոսյան 1/17, AM
(442) 18.06.2018
(540)



(511) դաս 29. կարտոֆիլի չիպսեր. մուրաբաներ. սառեցրած մրգեր. պահածոյացված բանջարեղեն. ջերմային մշակման ենթարկված բանջարեղեն. չորացրած բանջարեղեն. շաքարած մրգեր. յոգուրտ. կեֆիր (կաթնային ըմպելիք). կումիս (կաթնային ըմպելիք). կաթնամթերք. մարմելադ. մրգային չիպսեր. կարտոֆիլի յուղաբլիթներ. աղը դրած ձուկ. կարտոֆիլի փաթիլներ. արևածաղկի մշակված սերմեր. մշակված սերմեր. ցածր կալորիականությամբ կարտոֆիլի չիպսեր. մշակված քաղցր եգիպտացորեն. ընկույզի հիմքով հացին քսվող սնունդ. կարտոֆիլի հիմքով խմորագնդիկներ. սոյայի բլիթներ. կաթ. պահածոյացված մրգեր. ձվեր. աղը դրած միս. ենթամթերքներ. պահածոյացված ձուկ. պահածոյացված միս. մրգային պահածոներ. մսի պահածոներ.

դաս 30. մակարոնեղեն. նշով խմոր. համեմանք. հացանխաշխմորից. թխվածքաբլիթ. կոնֆետներ. վաֆլիներ. ամոքահունց բուլկիներ. հրուշակեղեն քաղցր խմորից, առավելապես խորիզով. կարամելներ (կոնֆետներ). հացահատիկային արտադրանք. ծամոն (մաստակ). շոկոլադ. նշակարկանդակներ. քաղցրավենիք. եգիպտացորենի փաթիլներ. ադիբուդի. պաղպաղակ. նրբաբլիթներ. քաղցրաբլիթներ. կակաոյով և կաթով ըմպելիքներ. շոկոլադակաթնային ըմպելիքներ. պաստեղներ (հրուշակեղեն). խմորեղեն (ալրային հրուշակեղեն). չոր թխվածքաբլիթ. բուլկիներ. պուդինգ (քաղցրակուտապ). մատուտակի ձողիկներ (հրուշակեղեն). սառնաշաքար (նաբաթ). փաթիլներ (հացահատիկային արտադրանք). կրեկերներ.

բրնձային բլիթներ. հացահատիկների հիմքով թեթև նախաճաշեր. չիգբուրգեր (սենդվիչներ). վարենիկներ (լցոնված խմորի գնդիկներ). հացահատիկային սալիկներ. շոկոլադապատ ընկույզներ. բրնձի պուդինգ (քաղցրակուտապ). ուտելի թուղթ. հացին քսվող սնունդ շոկոլադի հիմքով. հոթ-դոգ սենդվիչներ. չորահաց. զեֆիր (հրուշակեղեն). պաստիլա (հրուշակեղեն). սենբեյ (բրնձի կրեկերներ):

(210) 20180476 (111) 28253
(220) 29.03.2018 (151) 13.12.2018
(181) 29.03.2028

(730) Անհատ ձեռնարկատեր Արմիրա Ղուկասյան, Երևան, Քանաքեռի փ. 17, տուն 10/2, AM
(442) 16.05.2018
(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է կարմիր գույնով:
(511)

դաս 32. լիմոնադ, ոչ ալկոհոլային մրգային ըմպելիքներ, մրգահյութեր, տոմատի հյութ, ոչ ալկոհոլային ըմպելիքներ, կվաս:

(210) 20180509 (111) 28254
(220) 04.04.2018 (151) 13.12.2018
(181) 04.04.2028

(730) «Այ Քյու Կենտրոն» ՍՊԸ, Երևան, Դավիթ-թաշեն, 1 թաղ, շ. 43/3, AM
(442) 18.06.2018
(540)



(526) «ԿԵՆՏՐՈՆ» և «CENTER» բառերն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև, բաց և մուգ վարդագույն, կանաչ, բաց կանաչ, մանուշակագույն, բաց և մուգ փիրուզագույն գունային համակցությամբ:

(511)

դաս 41. ուսումնական գործընթացի ապահովում, դասապատրաստում, մենթալ թվաբանության ուսուցում, օտար լեզուների ուսուցում, ավագով նկարչության ուսուցում, նկարչության ուսուցում, արագ ընթերցանության ուսուցում:

(210) 20180548

(111) 28255

(220) 07.04.2018

(151) 13.12.2018

(181) 07.04.2028

(730) «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ, ք. Մասիս, Արդյունաբերական հանգույց, Գործարանային 10, AM

(442) 02.05.2018

(540)

SISAW

(511)

դաս 34. չմշակված և մշակված ծխախոտ. սիգարետներ, ծխազլանակներ. պապիրոսներ. սիգարիլներ. սիգարներ. ծամելու ծխախոտ. ծխախոտի փոխարինիչներ պարունակող սիգարետներ, ոչ բուժական նպատակների համար. ծխելու խոտաբույսեր. քթախոտ. էլեկտրոնային սիգարետներ. հեղուկ լուծույթներ էլեկտրոնային սիգարետների համար. էլեկտրոնային սիգարետների բուրավետարարներ, բացի եթերային յուղերից. ծխախոտի բուրավետարարներ, բացի եթերային յուղերից. լուցկիներ. լուցկիների բռնիչներ. լուցկու տուփեր. վառիչներ ծխախոտի համար. գազի բալոններ վառիչների համար. կայծքարեր. մոխրամաններ. թքամաններ ծխախոտի համար. ծխելու պիտույքներ. սիգարների և սիգարետների համար մուշտուկների սաթե ծայրապանակներ. ծխախոտի քսակներ. ծխազլանակի պարկուճներ առանց ծխախոտի մասերի. ֆիլտրեր սիգարետների համար. ծխամորճեր. մուշտուկներ սիգարների համար. մուշտուկներ սիգարետների համար. սիգարետի մուշտուկների ծայրապանակներ. ծխամորճերը

մաքրելու հարմարանքներ. ծխախոտաթղթերի գրքույկներ. կլանող թուղթ ծխամորճերի համար. սիգարետների պապիրոսաթուղթ. սիգարակտրիչ մեքենաներ. արկղեր սիգարների համար. արկղեր սիգարետների, ծխազլանակների համար. դրոցներ ծխամորճերի համար. անոթներ ծխախոտի համար. ծխախոտատուփեր. խոնավարարներով տուփեր սիգարների համար. գրպանի հարմարանքներ սիգարետները, ծխախոտերը փաթաթելու համար. ծխողների համար բերանի ցողացիրներ. նարգիլե. պիտույքներ նարգիլեի համար, ներառյալ՝ նարգիլեի գավաթներ և գլխիկներ, նարգիլեի ճկափողեր, նարգիլեի ծխափողեր և գտիչներ, նարգիլեի հորաններ, նարգիլեի ծխափողերով ճկափողեր, նարգիլեի կաղապարաձողեր, պայուսակներ և պատյաններ նարգիլեի համար. նարգիլեի անոթներ. մելաս ծխախոտային արտադրության մեջ օգտագործման համար. ծխելու նյութեր, ներառյալ՝ մելաս ոչ բժշկական կամ բուժական նպատակների համար. ծխախոտի և մելասի անուշաբույր խառնուրդներ նարգիլեի մեջ օգտագործման համար:

(210) 20180638

(111) 28256

(220) 23.04.2018

(151) 13.12.2018

(181) 23.04.2028

(730) ԷլՋի Էլեքթրոնիքս Ինք., KR

(442) 01.06.2018

(540)

TrueSteam

(511)

դաս 7. լվացքի էլեկտրական մեքենաներ հագուստի, սպիտակեղենի, գործվածքի համար. ամանեղեն լվացող ավտոմատ մեքենաներ. էլեկտրական փոշեկուլներ. հագուստի լվացման, մաքրման, այն է՝ չոր (քիմիական) մաքրման և շոգեմշակման հնարավորությամբ մաքրման, խնամքի և պահման կենցաղային մեքենաներ. հագուստի լվացման, մաքրման, խնամքի և պահման էլեկտրական կենցաղային ապարատներ, սարքեր և գործիքներ, որոնք

նախատեսված են հագուստի հոտազերծման, արդուկման և ախտահանման համար. էլեկտրական փոշեկուլների ճկափողեր. էլեկտրական փոշեկուլների պարկեր. ձողի տեսքով ուղղաձիգ փոշեկուլներ. արդյունաբերական ռոբոտներ. էլեկտրական պտտական օդափուքեր. օդային պոմպեր, օդի սեղմման և մատուցման պոմպեր. ռոտացիոն ճնշակներ. սառնարանային ճնշակներ. չորացնող մեքենաներ, կենտրոնախուսակներ լվացքը քամելու համար (չտաքացվող). էլեկտրական կենցաղային խառնիչներ. ռոբոտացված փոշեկուլներ. խոհանոցային էլեկտրական պրոցեսորներ. կենցաղային շոգեմաքրիչներ. ձեռքի փոշեկուլներ. էլեկտրական փոշեկուլներ մահճակալների և անկողնու պարագաների մաքրման համար.

դաս 11. օդորակիչներ. տաք օդով աշխատող ջեռուցման սարքեր. էլեկտրական կենցաղային խոնավարարներ. էլեկտրական կենցաղային չորուցիչներ, խոնավակլանիչներ. էլեկտրական վառարաններ (ջեռոցներ). կենցաղային ապարատներ և մեքենաներ ջուրը մաքրելու համար. ջրի կենցաղային իոնարարներ. մեմբրանային ապարատներ և սարքեր ջուրը մաքրելու համար. արևային ջերմային հավաքիչներ (ջեռուցում). օդամաքրիչներ. օդափոխման (օդի լավորակման) ապարատներ ջեռուցման համար. լուսադիոդային լուսավորման սարքեր. գազօջախներ, գազային վառարաններ. էլեկտրական խոհանոցային վառարաններ, սալօջախներ, ջեռոցներ. սննդամթերքի ջերմամշակման ապարատներ, սարքեր կամ սարքվածքներ. էլեկտրական սառնարաններ. հագուստի էլեկտրական չորուցիչներ. հագուստի խնամքի էլեկտրական կենցաղային մեքենաներ հագուստի չորացման համար. հագուստի լվացման, մաքրման, խնամքի և պահման էլեկտրական կենցաղային մեքենաներ՝ հագուստի հոտազերծման, ախտահանման և շոգեմշակման հնարավորությամբ. էլեկտրական չորուցիչ կենցաղային մեքենաներ՝ հագուստի հոտազերծման, ախտահանման և ճմռթումը կանխարգելող մշակման հնարավորությամբ:

(740) Էդուարդ Նահապետյան

(210) 20180673 (111) 28257
 (220) 03.05.2018 (151) 13.12.2018
 (181) 03.05.2028

(730) «Վայնվորքս» ՓԲԸ, Երևան, Մելքունով 18/8, AM

(442) 01.06.2018
 (540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է կանաչ գույնով:
 (511)

դաս 35. օգնություն գործարարության կառավարման հարցերում. տվյալներ գործարարական գործառնությունների մասին. ներմուծման-արտահանման գործակալությունների ծառայություններ. խորհրդատվություն գործարարության կազմակերպման և կառավարման հարցերով. շուկայի ուսումնասիրություն. խորհրդատվություն գործարարության կազմակերպման հարցերով. խորհրդատվություն գործարարության կառավարման հարցերով. մասնագիտական խորհրդատվություն գործարարության ասպարեզում. գործնական տեղեկատվություն. մատակարարման ծառայություններ երրորդ անձանց համար (ապրանքների գնում և ձեռնարկատերերին ապրանքներով ապահովում). գնման պատվերների մշակման գործընթացների կառավարում. ապրանքների և ծառայությունների լիցենզիաների առևտրային (կոմերցիոն) կառավարում երրորդ անձանց համար. ենթակապալառուի ծառայություններ (առևտրային (կոմերցիոն) օգնություն). առևտրային միջնորդություն (ծառայություն). առևտրային գործարքների համաձայնեցում և եզրափակում երրորդ անձանց համար. շինարարական նախագծերի համար առևտրային (կոմերցիոն) նախագծերի կառավարում. արտաքին վարչական կառավարում ընկերությունների համար. գործարար պայմանագրերի համաձայնեցում երրորդ անձանց համար.

դաս 44. այգեգործություն. գյուղատնտեսական սարքավորանքի վարձույթ. պարարտանյութերի և գյուղատնտեսական այլ քիմիկատների օդային և մակերևութային տարածում:

(210) 20180699 (111) 28258
 (220) 07.05.2018 (151) 13.12.2018
 (181) 07.05.2028
 (730) «Դուռ թրեյդ» ՍՊԸ, Երևան, Չկալովի փ.,
 տուն 2/1, AM
 (442) 16.05.2018
 (540)



(526) Բացի «Sirani» գրառումից մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:
 (511)
 դաս 44. գեղեցկության սրահների ծառայություններ:

(210) 20180768 (111) 28259
 (220) 16.05.2018 (151) 13.12.2018
 (181) 16.05.2028
 (730) «Պրոիզվոդստվեննո-Տորգովոե Պրեդպրիյատիե «Ֆարբիկա Ուպակովկի» ՍՊԸ, RU
 (442) 01.08.2018
 (540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև, սպիտակ և կանաչ գունային համակցությամբ:

(511)
 դաս 16. թղթե ժապավեններ. սեղանի թղթե սպիտակեղեն. ծանուցագրեր (գրասենյակային). բլոկնոտներ (նոթատետրեր). բլոկնոտներ (գրասենյակային պիտույքներ). բլոկնոտներ (նոթատետրեր) նկարչության, գծագրության համար. պոկովի թերթերով բլոկնոտներ. բրոշյուրներ. բուկլետներ. թուղթ. թերթերով թղթեր (գրասենյակային պիտույքներ). մոմած թղթեր. թուղթ գրանցող սարքերի համար. թուղթ պահարանների արկղերի համար (բուրավետացված կամ ոչ). թուղթ փայտազանգվածից. պատճենահան թուղթ (գրասենյակային). գրասենյակային թուղթ. մագաղաթաթուղթ. փոստային թուղթ. բրնձաթուղթ. փայլուն թուղթ. զուգարանի թուղթ. փաթեթավորման թուղթ. զտաթուղթ. բյուվարներ (սեղանի թղթապանակներ). տեղեկագրեր. գրամեքենաների գլանիկներ. թղթե կամ ստվարաթղթե ցուցանակներ. ձևվածքներ կարի համար. տոնական գունազարդ թղթե դրոշակներ. լրագրեր. սեղանի թղթե ուղեվաթեր. թղթե տարողություններ սերուցքի համար. ամսագրեր (պարբերական). տպագրական հրատարակություններ. պարբերական մամուլ. օրացույցներ. թղթե կալկա (մոմաթուղթ). կալկա (մոմաթուղթ) գործվածքի հիմքի վրա. կալկա (մոմաթուղթ). փոխադրանկարներ. նկարներ. նկարներ շրջանակված կամ չշրջանակված. ստվարաթուղթ. ստվարաթուղթ փայտանյութից (գրասենյակային պիտույքներ). ստվարաթղթե տուփեր բոլորազխարկների համար. քարտեր. կատալոգային քարտեր (գրասենյակային պիտույքներ). աշխարհագրական քարտեզներ. թղթե կաշպոներ (դեկորատիվ ծաղկամաններ). թղթե կամ ստվարաթղթե տուփեր. կնիքների, դրոշմակների տուփեր. ներկատուփեր (դպրոցական պիտույքներ). հեղուկ ճշտիչներ (գրասենյակային ապրանքներ). տպված կտրոններ. կորաքանոններ (գրասենյակային ապրանքներ). գծագրական կորաքանոններ. թղթե ժապավեններ, բացառությամբ գալանտերեայի կամ մագերի զարդերի. գրամեքենաների ժապավեններ. կպչուն ժապավեններ (գրասենյակային պիտույքներ). կպչուն ժապավեններ գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. սխալն ուղղելու ժապավեններ (գրասենյակային

ապրանքներ). ներկանյութով ժապավեններ. կաշուն երիզներ գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. ներկանյութով ժապավեններ տպիչների համար. ինքնասոսնձվող ժապավեններ գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. թղթե կամ պլաստիկից ներծծող թերթիկներ սննդամթերքը փաթեթավորելու համար. խոնավությունը կարգավորող թղթե կամ պլաստիկից թերթիկներ սննդամթերքը փաթեթավորելու համար. վիսկոզից թերթեր փաթեթավորման համար. վերականգնված թաղանթանյութից փափուկ թերթեր փաթեթավորման համար. պղպաղակավոր պլաստմասսայե թերթեր փաթեթավորման կամ կշռաբաշխման համար. տպարանային տառամարմիններ (թվային և տառային). վիմատիպ նկարներ. ներկերի արկղեր. ճարտարապետական մանրակերտներ. գծանկարչական տպագիր նյութեր. ծեփանյութեր. ուսուցողական նյութեր (բացառությամբ սարքերի). գրասենյակային նյութեր կնքելու համար. թղթե կամ ստվարաթղթե խծուծման նյութեր. թղթե կամ ստվարաթղթե փաթեթավորման (միջադրման, խծուծման) նյութեր. փաթեթավորման օսլայած նյութեր. կազմարարական նյութեր. զտող նյութեր (թղթից). թղթե կամ պլաստմասսայե տոպրակներ (ծրարներ, կապոցներ) փաթեթավորելու համար. թղթե կամ պլաստմասսայե տոպրակներ աղբի համար. պլաստմասսայե տոպրակներ ընտանի կենդանիների թափոնները հեռացնելու համար. նկարակալներ. հենածողիկներ նկարիչների համար. տպագրական դյուրակիր շարվածքներ (գրասենյակային պիտույքներ). թեքերով մանկական թղթա կրծկալներ. ինքնասոսնձվող պիտակներ (գրասենյակային). մատնակալներ (գրասենյակային պիտույքներ). պիտոյատուփեր հարդարանքի պարագաների համար. թելեր կազմարարական աշխատանքների համար. տպագրված նոտաներ. համարադրոշմիչներ. թղթե կամ ստվարաթղթե փաթեթավածքներ շշերի համար. սոսնձաթղթիկներ կնքելու համար. կազմեր (գրասենյակային պիտույքներ). անձնագրերի կազմեր. ձգուն (էլաստիկ) պլաստիկ թաղանթներ դարսակման համար. ասեղնագործության նմուշներ (սխեմաներ).

շնորհավորական բացիկներ. երաժշտական բացիկներ. փոստային բացիկներ. թղթե տոպրակներ. տոպրակներ միկրոալիքային վառարանում սնունդ պատրաստելու համար. թղթապանակներ փաստաթղթերի համար. պաստեղներ (գունամատիտներ). թղթե թաշկինակներ. պլաստմասսայե թաղանթներ փաթեթավորման համար. տակդիր-գորգիկներ աշխատասեղանի համար. սկուտեղներ դրամի տեսակավորման և հաշվարկի համար. գրաֆիկների թղթե տակդիրներ. հենակալներ գրքերի համար. տակդիրներ կնիքների, դրոշմակնիքների, դրոշմակների համար. տակդիրներ գարեջրի գավաթների համար. դրոցներ գրիչների և մատիտների համար. հենակալներ լուսանկարների համար. մաքրելու բարձիկներ. թանաքի բարձիկներ. բարձիկներ դրոշմակնիքների համար. կաշուն շերտեր կազմերը ամրացնելու համար (կազմարարական գործ). թղթե սրբիչներ ձեռքերի համար. գործված պաստառ բազմացման ապարատներում ներկով պատելու համար. գործված պաստառ փաստաթղթերը վերարտադրող մեքենաներում ներկով պատելու համար. գործված պաստառ կազմարարական աշխատանքների համար. կաշուն պաստառ գրասենյակային նպատակների համար. ոչ մանածագործական օֆսեթային պաստառ. դիմանկարներ. ճնշածմաններ. տպագիր արտադրանք. տպագիր կարգացուցակներ. թղթե կոսմետիկ անձեռոցիկներ. թղթե անձեռոցիկներ գրիմը հեռացնելու համար. թղթե անձեռոցիկներ սեղանի սպասքի տակ դնելու համար. սեղանի թղթե սփռոցներ. ցուցատախտակներ թղթից կամ ստվարաթղթից հայտարարությունների համար. տետրեր. գործվածք կազմարարական աշխատանքների համար. թղթագրենական ապրանքներ. տրանսպարանտներ (գրասենյակային ապրանքներ). տրաֆարետներ նկարելու համար. ստվարաթղթե դիտափողակներ. շշերի փաթեթվածք թղթից կամ ստվարաթղթից. թղթե զտիչներ սուրճի համար. թղթե դրոշներ. նրբաթիթեղ. կավե կաղապարներ մոդելավորման համար (նյութեր նկարիչների համար). լուսափորագրանկարներ. լուսանկարներ. տրաֆարետների պատյաններ. կտավներ նկարների համար. թղթից կամ ստվարաթղթից պիտակներ. պապիեմաշե.

սեղանի թղթե անձեռոցիկներ. թղթե սեղանի անձեռոցիկներ կլոր. սկուտեղներ նամակագրության համար.

դաս 17. հերմետիկացնող կաշուն ժապավեններ. մեկուսիչ ժապավեններ. ինքնասոսնձվող ժապավեններ, բացառությամբ բժշկականի, գրասենյակայինի կամ կենցաղայինի. կաշուն ժապավեններ, բացառությամբ բժշկականի, գրասենյակայինի կամ կենցաղայինի. ռետինե կամ պլաստմասսայե փաթեթավորման (միջադրման, խճուճման) նյութեր. խտացնող հերմետիկ նյութեր միացքների համար. զտող նյութեր (փրփրուն, մասնակի մշակված կամ պլաստիկ թաղանթներ). ռետինե տոպրակներ (ծրարներ, փաթեթներ) փաթեթավորման համար.

